

**«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ
2010Թ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ)**

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑ

1) Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը և դրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվելու է թողարկողը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը Ֆերոնոլիթի, մաքուր մոլիբդենի ջարդոնի և կալիումի պերտենատի արտադրությունն է: Արտադրության հումքն Ընկերությունը ձեռք է բերում ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ընկերություններից՝ համաձայն այդ ընկերությունների հետ կնքված համապատասխան պայմանագրերի: Այդ ընկերություններից են.

- «Ձանգեգուրի պղնձամոլիբդենային կոնքինատ» ՓԲԸ (ՀՀ) - Մոլիբդենի խտանյութի գնում
- «ՆՕԱԷ Ի Ի » Ի ԱԻ (ՌԴ) -Ալյումինի փոշու գնում
- «Վ. Մինասյան» Տրեյդինգ կոմպանի (Իրան) - Ֆերոսիլիցիումի գնում
- ՕՕՕ «Русекспорт» (Վրաստան) - Երկաթե հրաթեփի գնում
- “Ферротрейд” (Ուկրաինա) -Ալյումինի փոշու գնում
- “ENERGY INVEST” (Վրաստան) – Հեղուկ ամոնյակի գնում

Հումքի ձեռքբերման գները սահմանվում են ինչպես նախնական պայմանավորվածության համաձայն, այնպես էլ տարբեր միջազգային բորսաներում ձևավորված ու ամսագրերում հրապարակված մետաղների գներով:

2010 թ. 2-րդ եռամսյակի ընթացքում ընկերության արտադրության ծավալը կազմել է 7,755,790,500 դրամ կամ 20,171,100 ԱՄՆ դոլար: Նույն ժամանակահատվածում իրացումը կազմել է 8,216,174,000 դրամ կամ 21,481,900 ԱՄՆ դոլար: Արտադրության ծավալի և իրացման ամփոփ տվյալները բերված են թիվ 1 և թիվ 2 աղյուսակներում:

Աղյուսակ 1

«Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲԸ արտադրության ծավալը 2010թ. 2-րդ եռամսյակ

Արտադրվել է	Քանակ		Հազ. դրամ	Հազ. դոլար
Ֆերոնոլիթ	տն	703.0	6,261,332.6	16,284.4
Մաքուր մոլիբդենի ջարդոն	տն	114.5	1,472,745.8	3,830.3
Կալիումի պերտենատ	կգ	18.0	21,712.1	56.4
Ընդամենը			7,755,790.5	20,171.1

Աղյուսակ 2

«Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲԸ իրացման ծավալը 2010թ. 2-րդ եռամսյակ

Իրացվել է	Քանակ		Հազ. դրամ	Հազ. դոլար
Ֆերոնոլիթ	տն	700.0	6,221,231.3	16,238.5
Ֆերոնոլիթի գների վերահաշվարկ*	-	-	366,846.3	971.0

Մաքուր մոլիբդենի ջարդոն	տն	118.0	1,518,623.2	3,984.4
Մաքուր մոլիբդենի ջարդոնի գների վերահաշվարկ*	-	-	101,181.4	266.4
Կալիումի պերռենատ	կգ	0.0	0.0	0.0
Հյուրանոցային ծառայություն	-	-	8,291.8	21.6
Ընդամենը			8,216,174.0	21,481.9

* Հաշվետու եռամսյակում արտադրանքի վաճառքից հետո ընկած ժամանակահատվածում արտադրանքի գները բարձրացել են, այդ պատճառով դրանց դիմաց վճարվել է ավելի բարձր գին:

Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որը տեղի է ունեցել 2010 թ. մայիսի 21-ին, որոշում է ընդունել ուղղել Ընկերության 2009 թ. ֆինանսական տարվա արդյունքներով ստացված զուտ շահույթից 2,763,720,000 (երկու միլիարդ յոթ հարյուր վաթսուներեք միլիոն յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ սովորական անվանական բաժնետոմսերի շահութաբաժինների վճարմանը: Յուրաքանչյուր մեկ սովորական անվանական բաժնետոմսի վճարել տարեկան շահութաբաժին 40,000 ՀՀ դրամ:

Ընկերությանը «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ վճարվելու է 1,839,637,200 դրամ տարեկան շահութաբաժին:

Ընկերության գործունեության հետ կապված հիմնական ռիսկը պայմանավորված է համաշխարհային շուկայում տեղի ունեցող իրադարձություններով: Դրանցից ամենաէականը Ընկերության արտադրանքի և դրա համար անհրաժեշտ հումքի միջազգային գների փոփոխությունն է, ինչն ուղղակիորեն ազդում է Ընկերության շահույթի վրա: Հաշվետու եռամսյակում հումքի և արտադրանքի գները բարձրացել են, ինչը բարձրացրել է մակ գույցանիշների մակարդակը: Հումքի և արտադրանքի գները մախորդ տարվա նույն ժամանակահատվածի համար բարձր են:

Մյուս ռիսկը արժույթային ռիսկն է: Արտարժույթների փոխարժեքները հաշվետու եռամսյակում համեմատաբար նվազել են, այդ պատճառով դրանց տատանումները Ընկերության հիմնական ֆինանսական ցուցանիշների վրա բացասական են ազդել:

Նշված երկու գործոններն էլ իրենց անորոշությամբ էապես կազդեն մակ հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի վրա:

Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները և գործակիցները բերված են թիվ 3 և թիվ 4 աղյուսակներում:

Աղյուսակ 3

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2010թ. II եռ.

Ցուցանիշ	Հազ. դրամ
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-7,586,372.0
Իրացման ծախսեր	-7,025.0
Վարչական ծախսեր	-166,806.0
Գործառնական գործունեությունից շահույթ	455,971.0
Այլ գործառնություններից շահույթ	-4,128.0
Այլ ոչ գործառնական շահույթ, որից՝	1,037,680.0

Ցուցանիշ	Հազ. դրամ
Շահութաբաժին	1,839,637.2
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	-1,017,964.5
Ավանդի տոկոսային եկամուտ	208,406.0
Ակտիվների վերաբերող շնորհներից	9,014.8
Այլ շահույթ (վնաս)	-1,413.5
2010թ. 2-րդ եռամսյակի շահույթ	1,489,523.0
Շահութահարկի գծով ծախս (նվազագույն շահութահարկ)	-48,823.0
2010թ. 2-րդ եռամսյակի զուտ շահույթ	1,440,700.0
Դեբիտորական պարտք	7,961,129.0
Կրեդիտորական պարտք	2,438,102.0

Աղյուսակ 4

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 2010թ. II եռ.

Ցուցանիշի անվանումը	01.07.2010 թ.
Ջուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	55223.1
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	11.5 %
Ակտիվների շահութաբերություն (ROA)	10.4 %
Ջուտ շահույթի մարժա (NPM)	22.9 %
Կապիտալի համարժեքության գործակից	92.5 %
Ֆինանսական կախվածության գործակից	8.1 %
Բացարձակ իրացվելության գործակից	4.3
Ընթացիկ իրացվելության գործակից	7.6
Ընդհանուր իրացվելության գործակից	8.5
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	1964.8
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	0.2
Պաշարների շրջանառելիության գործակից	7.1
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	51.6
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	3.8
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	95.5

Ընկերության աշխատավարձի ֆոնդը՝ 338,533.6 հազ. դրամ է, աշխատողների միջին ցուց. թիվը՝ 545 մարդ, իսկ միջին աշխատավարձը՝ 207,054 դրամ:

2) Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

Ընկերությունը ներկայում Տիգրան Մեծ պողոտային հարող իրեն պատկանող տարածքում իրականացնում է լայնածավալ շինարարական աշխատանքներ:

Ներկայիս համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում զարգացման այլ ծրագրերի և հեռանկարների վերաբերյալ կանխատեսումներ հնարավոր չէ անել:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ պատասխանատու անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Գենիկ Կարապետյան	տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն	Որպես տնօրենների խորհրդի նախագահ՝ տնօրենների խորհրդի աշխատանքների կազմակերպման համար, որպես գլխավոր տնօրեն՝ ընթացիկ գործունեության (այդ թվում՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման կազմակերպման) համար
Դավիթ Կարապետյան	Փոխտնօրեն, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Զիվան Գյուլումյան	Գլխավոր ինժիներ, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Եղիշե Ստեփանյան	Գլխավոր ինժիների տեղակալ, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Սիլվա Խաչատրյան	Տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր հաշվապահ	Հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար
Կարեն Սահակյան	Տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով